ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆ

Մարտի 18-ին տեղի ունեցավ ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի գիտական նստաշրջանը՝ նվիրված հունգարական պրոլետարական հեղափոխության և Հունգարիայի Սովետական Հանրապետության հռչակման 50-ամյակին։ Նստաշրջանը ներածական խոսքով բացեց ինստիտուտի դիրեկտոր, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գ. Դալոյանը։

Կարդացվեց գիտական չորս զեկուցում։ Առաջինը հանդես եկավ հանրապետության ԳԱ ակադեմիկոս Ծ. Աղայանը, որի զեկուցումը նվիրված էր 1919 թվականի՝ Հունգարական Սովետական Հանրապետության ստեղծման և նրա պատմական նշանակության հարցին։ Ներկայացնելով հունգարական բանվորական շարժումների նախորդ էտապները, նա մասնավորապես ծանրացավ Հունգարիայում 1918 թվականի բանվորական հեղափոխական շարժումների և ազգային-ազատագրական պայքարի այն բուռն շրջանի վրա, որի ժամանակ պահանջ էր դրվում համերաշխության ձեռք մեկնել Սովետական Ռուսաստանին, վերջ տալ պատերազմին և տապալել Հաբսբուրգների տիրապետությունը։ 1918 թվականի աշնանը հեղափոխական ճգնաժամը ծայրաստիճան սրվեց։ Ապստամբությունն ընդգրկեց գրեթե ամբողջ երկիրը։ Ապստամբության ալիքը, նույն թվականի հոկտեմբերին, քշեց-տարավ նաև Հաբսբուրգյան միապետությունը, ավստրո-հունգարական կարկատանային կայսրությունը փուլ եկավ։ Վերածնվեցին ինքնուրույն ազգային պետությունները՝ Չեխոսլովակիան, Հարավսլավիան, Հունգարիան, Ավստրիան։ Զեկուցողը բազմաթիվ փաստեր է բերում հաստատելու համար այն միտքը, որ Հաբսբուրգների տիրապետության տապալումը բնավ չթեթևացրեց հունգար ժողովրդի վիճակը, և այդ է պատճառը, որ Հունգարիայում բանվորների և գյուղացիների հեղափոխական ելույթները հսկայական չափերի հասան, վտանգի տակ դրին բուրժուա-կալվածատիրական կարգերի գոյությունը։ 1918 թվականի հոկտեմբերի 30—31-ին բանվորներն ու զինվորները Բուդապեշտում գրավեցին պետական հիմնարկությունների մեծ մասը։ Պայքարի այդ բովում էլ ծնվեցին առաջին սովետները։

Հեղափոխական շարժումներին նոր թափ հաղորդեց 1918 թվականի նոյեմբերի 20-ին Հունգարիայի կոմունիստական կուսակցության ստեղծումը, որի հիմնադիրներից էին Բելա Կունը, Տիբոր Սամուէլը, Պորը, Ռուբինովիչը, Մյունիխը և շատ ուրիշներ։ Հունգարիայում մարտի 21-ին հռչակվեց սովետական հանրապետություն։ Հաջորդ օրը, մարտի 22-ին, Հունգարիայի սովետական կառավարությունը Զեպելի ռադիոկայանով կապ հաստատեց Ռուսաստանի սովետական կառավարության հետ։ Ի պատասխան դրան Վ. Ի. Լենինը ասել է. «Անկեղծ ողջույն Հունգարական Սովետական Հանրապետության պրոլետարական կառավարությանը և հատկապես ընկեր Բելա Կունին։ Ձեր ողջույնը ես հաղորդեցի Ռուսաստանի կոմունիստական բոլշևիկների կուսակցության համագումարին։ Հսկայական խանդավառություն»։

Սակայն Հունգարական Սովետական Հանրապետության դեմ հանդես եկավ ներքին հետադիմական ուժերի և օտարերկրյա ինտերվենտների լայն կոալիցիան։ 1919 թ. օգոստոսի 1-ին սովետական իշխանությունը Հունգարիայում տապալվեց։ Հունգարական պրոլետարական հեղափոխության և Հունգարիայում Սովետական Հանրապետության պատմական նշանակությունը հրսկայական է,— զեկուցման վերջում ասում է ակադեմիկոս Ծ. Աղայանը։ Այն թեև հակահեղափոխության կողմից ճնշվեց, բայց անջնջելի հետք թողեց աշխատավորների գիտակցության մեջ, գիտակցություն, որ 1945 թվականին Հունգարիան դուրս բերեց սոցիալիզմի ճանապարհը և Հունգարիայի պատմության մեջ բաց արեց նոր դարաշրջան։

«1848—1849 թթ. հեղափոխությունը Հունգարիայում և նրա արձագանքները արևմտահայ մամուլում» զեկուցումով հանդես եկավ պատմական գիտությունների թեկնածու Վ. Ոսկանյանը։

Խոսելով հունգարական հեղափոխության ու նրա նշանակության մասին, զեկուցողը միաժամանակ ունկնդիրներին ներկայացրեց այն մեծ հետաքրքրությունը, որ հայ հասարակայնությունը առաջ է բերել Հունգարիայում ծավալված ազատագրական շարժումների նկատմամբ։

«Հայերի մասնակցությունը Հունգարական ազատագրական շարժմանը (17-րդ դ.)» հարցն է լուսաբանում իր զեկուցման մեջ պատմական գիտությունների թեկնածու Ս. Քոլանջյանը Պատմության այն դաժան օրերին, երբ թուրքական բռնակալության անասելի հալածանքն ու զրկանքը թևածում էր հարավ-արևելյան Եվրոպայի երկնակամարում և օսմանյան արյունալի լաթաղանը դամոկլյան սրի նման կախված էր ստրկացված ժողովուրդների գլխին, Հունգարիայի տարբեր վայրերում հայերն էլ չանում էին իրենց մասնակցությունն ունենալ օսմանյան ավազակապետության կործանման նպատակին ուղղված ձեռնարկներին։ Հայտնի է, որ հայ ազգային-ազատագրական շարժման երախտավորներից մեկը՝ Իսրայել Օրին, Վիեննայում եղած ժամանակ քաղաքական մերձակցություն ուներ հայազգի մի կրոնավորի՝ Ներսես Երևանցու հետ։ Թուրքերի դեմ մղված պատերազմի ժամանակ Ներսեսը մկրտել է 1200 թուրքերի, թարգմանել հայագիր բազում գրություններ և նպաստել 1686 թվականի Բուդապեշտի գրավմանը։ Զեկուցողը ուշագրավ փաստեր բերեց Հունգարիայի մայրաքաղաք Բուդապեշտի ազատագրման ժամանակ (1686 թ.) մի այլ հայի՝ Դաբրիել Թոկատացու գործունեությունից

Նստաշրջանի մասնակիցները մեծ հետաքրքրությամբ լսեցին բանասիրական գիտությունների թեկնածու Մ. Մխիթարյանի՝ «Հունգարիայի 1848—1849 թթ. հեղափոխության արձագանքները Նոր-դար» և «Փորձ» պարբերականներում» զեկուցումը։

Ն. ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ